

տիտղոսը պիտի կազմեր.– *Ցայգալոյսը*³²: Ճակատագրին Մթնշաղն էր ան,– յուլիս ամսուան այն ցայգը՝ ուր վայրկեան մը հորիզոնին վրայ լուսեղ Արշալոյսը արիւնոտ վերջալոյսին կը խառնուի:

Վայրկեան մը կարծեցինք թէ հոգեւարքի ջահերը մարեցան այլեւս.– Սահմանադրական օրեր էին: Սխալ: Եարճանեան եկաւ մեզի գուժելու թէ ընդհակառակը այժմ հոգեւարքի խարոյկները կը վառեն. ստացեր էր աւաճ, *Կարմիր լուրեր բարեկամէն*: Այդ լուրերը հոյակապ եւ եղերական կերպով կ'երգէր մեզի: Իր քերթողական մէկ ուրիշ հատորն էր: Նոր ձեւափոխում կրած էր իր տաղանդը, պատկերները աւելի որոշ էին դարձած, եւ վիպողի շունչ մը կար իր մէջ. կը պատմէր ոճիրը զայն նկարելով: Կնոջ մարմիններու եւ զարդերու նկարագրութիւնը նորութիւն մըն էր իր այդ գիրքին մէջ, յաջող նորութիւն մը. ամենէն տարամերժ գոյները կը շաղուէին ու կը համադրուէին իր գրչին տակ, իր պաստառին վրայ.– Տաղանդաւոր ոճրագրութիւն:

*Կարմիր լուրեր բարեկամէն*ին յաջորդեց *Հայրենի Հրաւերներ* հատորը: Եարճանեան կ'երգէր Ամերիկայէն: Հոն հայ պանդուխտներուն մէջ ճանչցած էր հայուն ամենէն խորունկ վիշտը,– *Կարօտախտը*: Քերթողը կարծես երկու աշխարհներուն, Հայաստանի ու Ամերիկայի միջեւ կանգնած կը տարածէ թելերը, իրարու քով կը բերէ, մէկ համբոյրի եւ ցաւի մէջ կը միացնէ հարսերը տնասէր ու փեսաները տարաշխարհիկ, մայրերը հայրենապահ եւ զաւակները նժդեհական: – Այս հատորը քերթողին գլուխգործոցն ըլլալ կը թուի ինձի. հոն մարդկային այնպիսի բան մը կայ, որ սահմանուած է մարդ էակին հետ ապրելու: Երգն է անպատիր սէրին, գոյակից վիշտին, ընտանիքէն ծագում առնող եւ հայրենիքը ամրապնդող այն նուիրման պատուանդանին, որուն վրայ միայն կրնայ իրականանալ նոյն իսկ մարդկութեան հեռաւոր եղբայրութիւնը:

Անցնինք Եարճանեանի արուեստին մասնաւոր գիծերուն: Ըսուեցաւ թէ քերթողը դիւցազներգական